

**MEMBERS OF THE BOARD**

**MÓNICA GARCÍA, PRESIDENT**  
**KELLY GONEZ**  
**DR. GEORGE J. MCKENNA III**  
**NICK MELVOIN**  
**SCOTT M. SCHMERELSON**  
**DR. RICHARD A. VLADOVIC**



**LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT**  
**ADMINISTRATIVE OFFICES**

333 South Beaudry Avenue, 25<sup>th</sup> Floor  
Los Angeles, California 90017  
Telephone: (213) 241-5582 | Fax: (213) 241-7561

**AUSTIN BEUTNER**  
Superintendent

**FRANCES GIPSON, Ph.D.**  
Chief Academic Officer

**LYDIA ACOSTA STEPHENS**  
Executive Director

Փետրվարի 13, 2019

**Հարգելի ծնող/խնամակալ**

Այս գարնանը ձեր երեխան կհանձնի Կալիֆորնիայի Անգլերեն լեզվի տիրապետման գնահատման ամփոփիչ թեստ (ELPAC): Մանկապարտեզից մինչև տասներկուերորդ դասարանի աշակերտները, ովքեր դասակարգված են որպես Անգլերեն լեզու սովորողներ կհանձնեն Կալիֆորնիայի Անգլերեն լեզվի տիրապետման գնահատման ամփոփիչ թեստը (ELPAC) ամեն տարի, մինչև չվերադասակարգվեն որպես անգլերեն լեզվին տիրապետողներ: Ստուգվում են աշակերտների լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտությունները:

Ձեր երեխայի՝ անգլերեն սովորելու առաջընթացը կարևոր է, այնպես որ դպրոցում նրան դասավանդում են և աջակցություն են տրամադրում անգլերենի, անգլերեն խոսքի/գրագիտության, մաթեմատիկայի, գիտության և այլ դպրոցական առարկաներից: Կալիֆորնիայի Անգլերեն լեզվի տիրապետման գնահատման ամփոփիչ թեստը, կամ «Ամփոփիչ ELPAC»-ը, թեստ է, որը ստուգում է, թե ինչքան լավ են աշակերտները հասկանում անգլերեն, եթե դա նրանց տանն օգտագործվող լեզուն չէ: ELPAC թեստից ստացված տեղեկությունը ցույց է տալիս երեխայի ուսուցչին այն ոլորտները, որոնցում երեխան լրացուցիչ օգնության կարիք ունի: Ձեր երեխային կգնահատեն ամփոփիչ ELPAC-ով 2019թ. փետրվարի 4-ից մինչև 2019թ. ապրիլի 30-ը: Դուք կարող եք օգնել ձեր երեխային պատրաստվել թեստին հետևյալ կերպ.

- Կարդալ ձեր երեխայի համար կամ խնդրել նրան կարդալ ձեզ համար կանոնավոր կերպով
- Օգտագործել նկարներ և խնդրել ձեր երեխային ասել, թե ինչ է տեսնում, կամ ինչ գործողություն է կատարվում յուրաքանչյուր նկարում
- Հնարավորություն տվեք երեխային օգտագործել լեզուն դպրոցից դուրս
- Խոսեք ուսուցչի հետ երեխայի լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտությունների մասին, որպեսզի օգնեք նրա առաջընթացին:

Դուք կարևոր դեր ունեք ձեր երեխայի կրթության հարցում: ELPAC-ի մասին ավելի շատ տեղեկություն ստանալու համար այցելեք Կալիֆորնիայի կրթության վարչության վեբկայքում գտնվող ճանաչողի համար ուղեցույցը ELPAC-ի վերաբերյալ՝

<https://www.cde.ca.gov/ta/tg/ca/parentguidetounderstand.asp>:

Դուք կարող եք նաև նայել թեստի հարցերի նմուշները ELPAC-ի վեբկայքում՝

<https://www.elpac.org/resources/practicetests/>:

Եթե հարցեր ունեք ELPAC հանձնելու վերաբերյալ, խնդրում ենք դիմել ձեր երեխայի դպրոց:

Հարգանքով

Ֆրելիա Գիգոսյան, գ.դ.  
Ավագ ակադեմիական պաշտոնյա  
Ուսումնական բաժին

Լիլիա Ակոստա Ստեֆենս  
Գործադիր տնօրեն  
Բազմալեզվային և բազմամշակութային կրթության բաժին